



Հիվանդի Ֆինանսական աջակցության քաղաքականություն (Financial Assistance Policy, FAP).

Loma Linda University Medical Center-ը, Loma Linda University East Campus Hospital-ը, Loma Linda University Surgical Hospital-ը և Loma Linda University Health Beaumont-Banning-ը («LLUMC») հանդիսանում է կրոնական հիմունքով գործող կազմակերպության մի մաս, որը ձգտում է հոգալ մեր աշխարհագրական սպասարկման տարածքում գտնվող հիվանդների առողջապահական խնամքի կարիքները: LLUMC-ի առաքելությունն է «շարունակել Հիսուս Քրիստոսի ապաքինող ծառայումը և մարդուն ամբողջական դարձնելը»: LLUMC-ի առաքելությունը պարզ ցուցադրված է այս FAP-ի միջոցով: LLUMC-ի առաջին և հիմնական պատասխանատվությունն է երաշխավորել, որ իր հիվանդները ստանում են հոգատար, ժամանակին տրամադրվող և համապատասխան բժշկական խնամք՝ հաշվի առնելով հիվանդի գաղտնիությունը, արժանապատվությունը և տեղեկացված համաձայնությունը:

Մենք վճռական ենք երաշխավորել, որ հոգատար, որակյալ խնամքը տրամադրվում է բոլորին՝ անկախ վճարելու նրանց հնարավորությունից: LLUMC-ի FAP-ն օգնում է իր համայնքի անդամների համար մատչելի դարձնել բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները: Սա ներառում է այն մարդկանց, ովքեր չունեն առողջապահական ապահովագրություն և չեն կարող վճարել հիվանդանոցի իրենց հաշիվն, ինչպես նաև այն հիվանդներին, ովքեր ունեն ապահովագրություն, սակայն ի վիճակի չեն վճարել իրենց հաշիվն այն բաժինը, որն ապահովագրված չէ ապահովագրության կողմից: Կախված հանգամանքներից, եկամտից և ընտանիքի չափսից՝ որոշ հիվանդներից չի պահանջվի վճարել ծառայությունների համար, մյուսներին, հնարավոր է, կլինդրեն մասնակի վճարում կատարել:

Ո՞վ է իրավասու

Այն հիվանդները, ում ընտանեկան եկամուտը կազմում է դաշնային աղքատության ուղեցույցների 350% կամ պակաս, կարող են իրավասու լինել աջակցության համար LLUMC-ի միջոցով: Անվճար խնամքը մատչելի է չապահովագրված հիվանդների համար, ում ընտանեկան եկամուտը կազմում է դաշնային աղքատության ուղեցույցների 200% կամ պակաս: Մասնակի գեղջերը մատչելի են դաշնային աղքատության ուղեցույցների 201%-ից 350% միջև ընկած ապահովագրված և չապահովագրված հիվանդների համար:

Քանի որ դա կօգնի ձեզ, եթե ապահովագրված չեք, խնդրում ենք դիմել Medi-Cal-ի համար: Եթե ձեզ ծառայություններ են տրամադրվում LLUMC-ում, մենք կարող ենք



օգնել ձեզ Medi-Cal-ի համար դիմելու գործընթացում: Բաց անդամագրման ընթացքում, հնարավոր է, որ կարողանաք ապահովագրում ստանալ Covered California-ի ներքո:

Ի՞նչ է ապահովագրում FAP-ը

FAP-ն ապահովագրում է շտապ օգնության և բժշկական տեսակետից անհրաժեշտ առողջապահական ծառայությունները, որոնք տրամադրվում են LLUMC-ում: Ծառայությունը համարվում է բժշկական տեսակետից անհրաժեշտ, երբ այն ողջամիտ է և անհրաժեշտ է կյանքը պահպանելու, ուժեղ հիվանդությունը կամ զգալի հաշմանդամությունը կանխելու կամ սուր ցավը թեթևացնելու համար: Այս սահմանումից բացառվում են այն յուրահատուկ ծառայությունները, որտեղ մատչելի են բժշկական տեսակետից արդյունավետ այլընտրանքային թերապիաները: Օրինակները ներառում են՝ 1) կոսմետիկ և/կամ պլաստիկ վիրահատության ծառայություններ, 2) անպտղության ծառայություններ, 3) տեսողության ուղղում, 4) պրոտոնային թերապիա, 5) ռոբոտային ընթացակարգեր, 6) օրթոպեդիկ սարքեր/պրոթեզներ, 7) փոխնակ հղիություն, կամ 8) այլ ծառայություններ, որոնք հիմնականում հարկավոր են հիվանդի հարմարավետության և/կամ հիվանդի հարմարության համար: FAP-ը կիրառելի չէ բժշկի ծառայությունների համար, որոնք տրամադրվել են LLUMC-ում: Այս ապահովագրական վկայագրով ՉԱՊԱՀՆՎԱԳԲՎԱԾ մատակարարների ամբողջական ցանկը կարելի է ձեռք բերել <https://medical-center.lomalindahealth.org/financial-assistance#llumc> կայքէջում:

Սովորաբար գանձվող գումարներ՝ (Amounts Generally Billed, AGB)

FAP-ի համար իրավասու անհատից չի գանձվելու ավելի, քան Medicare դրույքաչափը շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքի համար:

Ինչպես դիմել.

FAP դիմումներն անվճար մատչելի են բոլոր հիվանդներին: Դրանք մատչելի են առցանց՝ <https://medical-center.lomalindahealth.org/financial-assistance#llumc> կայքէջում: Թղթե պատճենները խնդրեք հաստատությունում գտնվող Ընդունման և գրանցման բաժիններից:

Ծրագրի մասին տեղեկություններ խնդրեք էլեկտրոնային ձևով.

Ծրագրի մասին տեղեկությունների էլեկտրոնային պատճենները մատչելի են էլ. փոստով՝ խնդրանքի դեպքում: Զանգահարեք (909) 558-8613 հեռախոսահամարով էլեկտրոնային պատճեններ խնդրելու համար: Զանգահարելիս խնդրում ենք պատրաստ լինել տրամադրելու էլ. փոստի հասցե, որտեղ կարող է ուղարկվել տեղեկատվությունը:



Ծրագրի մասին տեղեկություններ ստացեք անձամբ.

Ծրագրի մասին տեղեկությունները մատչելի են Ընդունման և գրանցման բաժիններում՝ հաստատությունում:

Ծրագրի մասին տեղեկություններ կամ աջակցություն խնդրեք հեռախոսով.

Ֆինանսական աջակցության անձնակազմը մատչելի է հեռախոսով տեղեկություններ տրամադրելու, FAP իրավասությունը որոշելու և FAP-ի համար դիմող հիվանդին օգնելու համար: Խորհրդատուների հետ կարող եք կապվել՝ (909) 558-8613 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 07:30-ից 16:00-ը:

Ծրագրի մասին տեղեկություններ խնդրեք ԱՄՆ փոստային ծառայության միջոցով.

Հիվանդը կարող է փոստով խնդրել ծրագրի մասին տեղեկություններ: Տեղեկություններ ստանալու խնդրանքները կարող են փոստով ուղարկվել այստեղ՝

Loma Linda University Medical Center
P.O. Box 700
Loma Linda, CA 92354

Այլ լեզուներ.

FAP-ի, FAP-ի դիմումի ձևաթղթի և Պարզ լեզվով գրված ամփոփագրի պատճենները մատչելի են անգլերեն և իսպաներեն լեզուներով: Հնարավոր է, մատչելի լինեն այլ լեզուներ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք (909) 558-8613 հեռախոսահամարով կամ գրուցեք Ֆինանսական աջակցության անձնակազմի անդամի հետ: